ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԲԵՂՄՆԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ

(Ճարտարապետ-գիտնական Մուրադ Հասրաթյանի 75-ամյակի առթիվ)

Անցյալ դարի 30-ական թվականներից հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանին հետևեց ճարտարապետական գիտության նվիրյալների մի համախումբ՝ Հովհաննես Խալփախչյան, Նիկոլայ Տոկարսկի, Վարազդատ Հարությունյան, Ալեքսանդր Սահինյան, Ստեփան Մնացականյան, Կոստանդին Հովհաննիսյան, Տիրան Մարության, Անատոլի Յակոբսոն, Յուրի Յարալով՝ բոլորը մի սերնդի գիտնականներ, որոնք գրեթե մեկեն հանդես եկան և մեկեն հեռացան: Ասպարեզում քչերը երևացին, առաջինը Մուրադ Հասրաթյանն էր, որ եղավ այդ պատկառելի դեմքերին հաջորդողը, նրանց ավանդույթների ժառանգորդական փոխանցողն ու զարգացնողը, կապող օղակը՝ նրանց և ձևավորվող գիտնական-հետազոտողների նոր սերնդի միջև:



Մ. Հասրաթյանը 1958 թվականից աշխատել է «Երևաննախագիծ» ինստիտուտում որպես ավագ ճարտարապետ՝ նախագծելով մի շարք բնակելի, ուսումնական և այլ շենքեր: 1964 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում, 1988 թվականից ճարտարապետության բաժնի վարիչն է: Հայ ճարտարապետական գիտության ոլորտը ոտք դնելուց առաջ ունեցած նախագծային աշխատանքի զգալի փորձը նպաստեց նրա հետազոտությունների փաստարկվածությանը, կիրառական նշանակության մեծացմանը:

Երկրի սոցիալ-տնտեսական նոր պայմանները, անկախ ու ազատ կենսաձևը պայմանավորում են գիտության նոր որակ, գիտական մոտեցումների և զարգացման ուղղությունների կատարելություն, արդիականացում: Դրա համար շատ կարևոր է գիտության փաստական հենքի հետագա հարստացումը, քննական-վերլուծական մեթոդի խորացումը, Հայաստանի և մերձավոր երկրների մշակութային կապի ու առնչակցությունների բացահայտումը և այլն: Մ. Հասրաթյանի ներդրումը և այդ նշված ուղղություններով շոշափելի է: Մասնավորապես գիտնականը բացահայտել է և շրջանառության մեջ դրել զգալի թվով՝ առավելապես անհայտ կամ սակավ հայտնի վաղմիջնադարյան հուշարձաններ (Սարակապի, Դդմաշենի, Լուսակերտի եկեղեցիներ, Տաշիրի սրահավոր միանավ դահլիճներ, Հայաստանի արտաքուստ շեշտված խորանով եկեղեցիներ, Կարենիսի, Ամարասի մեմորիալ կառույցներ և այլն):

Մինչև Մ. Հասրաթյանի աշխատությունների երևան գալը, հայ ճարտարա-

պետության պատմության մեջ հայկական ուշմիջնադարյան (XVII–XVIII դդ.) հուշարձանները սակավ էին շրջանառվում: Նա առաջինն է լայնամասշտաբ և համակողմանիորեն հետազոտել ու ներկայացրել այդ շրջանի ճարտարապետությունը: Դա վերաբերում է առաջին հերթին Սյունիքի հուշարձանախմբերին (Սյունյաց Մեծ անապատ, Հալիձորի բերդ, Տաթևի Մեծ անապատ, Շատինի վանք, Շինուհայրի Կուսանաց վանք, Մեղրու տարածքի հուշարձաններ, Ջուղայի խաչքարեր, երկմույթ եկեղեցիներ և այլն), որոնց ուսումնասիրությունը ոչ միայն հարստացրեց ուշմիջնադարյան փուլի ճարտարապետական նկարագիրը, այլև հիմք տվեց հայ ճարտարապետության զարգացման այդ փուլն անվերապահորեն համարելու համընդհանուր հայ ճարտարապետության լիարժեք-օրգանական բաղադրիչը: Գիտնականն ուշագրավ բացահայտումներ է արել վանք, անապատ կրոնական հաստատությունների, վանք-ամրոց կրոնական-պաշտպանական համալիրի վերաբերյալ:

Մինչև վերջին տասնամյակները հայ ճարտարապետության պատմատեսական գիտության մեջ բավարար խորությամբ չէր ներկայացվում հայ գաղթավայրերի ճարտարապետությունը, Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս գտնվող բնիկ հայկական տարածքների՝ հատկապես Ղարաբաղի ճարտարապետությունը: Այդ առումով կարևոր եղավ Մ. Հասրաթյանի հեղինակած «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը» աշխատությունը (Երևան, 1992), որում հիմնավոր և հանգամանալից ձևով ցույց է տրված արցախյան ճարտարապետության ձևավորման ու զարգացման ուղին, ճարտարապետական դպրոցի առաջացման և բարգավաճման նախադրյալները, նրա օրգանական միասնությունը համընդհանուր հայ ճարտարապետության հետ: Եվ ո՛չ միայն դա, գիտնականը Արցախի ճարտարապետական առանձին կառույցներին ու համալիրներին (Ամարաս, Դադիվանք, Խաթրավանք-Խաղավանք, Գանձասար, Գտչավանք, Բռի եղցի վանք, Հակոբավանք և այլն) նվիրել է առանձին աշխատություններ, որոնց կարևորությունը դժվար է գերագնահատել՝ Արցախի ճարտարապետությունը ադրբեջանական հավակնություններից ու բարբաջանքներից զերծ պահելու առումով, հատկապես այժմ, երբ ադրբեջանական ողջ պատմագիտությունը և պետական կազմավորումը զբաղված են Արցախի աղվանացման-ադրբեջանացման «հիմնավորումներով»՝ դրանք տարածելով աշխարհով մեկ, ամենատարբեր լեզուներով, բազմատպաքանակ հրատարակություններով: (Այդ ֆոնի վրա հույժ անհրաժեշտություն է «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը» գրքի հրատարակումը նաև օտար լեզուներով և լայնորեն տարածումը):

Եվ ո՛չ միայն գրչով. Մ. Հասրաթյանը միջազգային գիտաժողովներում քանիցս հանդես է եկել ադրբեջանցի կեղծարար-պատմաբանների (Զ. Բունիաթով, Դ. և Մ. Ախունդովներ, Ռ. Գեյուշև, Ֆ. Մամեդովա և այլք)՝ հայ ճարտարապետությունը հայ ժողովրդից օտարելու հավակնությունների դեմ:

Նկատենք, որ գիտնականը մի առանձին սեր ու հրապուրանք ունի հայրենի Սյունիքի հուշարձանների հանդեպ, որ երևի թե, գալիս է նաև հորից՝ ականավոր պատմաբան-բանասեր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մորուս Հասրաթյանից,

որ Սայաթ-Նովայի երգերից հետո, իր կյանքի գործը դարձրեց հայ հնագիտությունը և ճարտարապետությունը՝ հատկապես Սյունիքի ճարտարապետությունը, ստեղծելով արժեքավոր մի շարք աշխատություններ, ինչպես սյունիքյան ճարտարապետության գանձերից մեկին՝ Ծիծեռնավանքին նվիրվածն է:

Մ. Հասրաթյանն առաջիններից է, որ հայ ճարտարապետության պատմատեսական գիտության մեջ քննական-վերլուծական մոտեցումը ողջ խորությամբ դարձրեց իր ստեղծագործական մեթոդակարգի հիմքը: Օրինակ՝ Հասրաթյանը չընդունեց դեռևս Թ. Թորամանյանից եկող՝ արաբական տիրապետության ընթացքում Հայաստանում «քարը քարի վրա չդրվելու» կարծիքը: Նա հայ մշակույթի մեծ երախտավոր Կարո Ղաֆադարյանից եկող այն կարծիքի հետևորդն է, որ «որևէ դարաշրջանի ճարտարապետություն, ինչ բնույթ էլ ունենա նա, պետք է իր արտահայտությունը գտնի պատմության էջերում...»[1]: Հասրաթյանը եզակի հեղինակներից է, որի աշխատություններում հայ ճարտարապետության տարեգրությունը դիտարկվում է անընդմեջ՝ ծագումից և կազմավորումից սկսած՝ մինչև մեր օրերը:

Հայաստանի և մերձավոր երկրների ճարտարապետական առնչությունների խնդիրները շարունակաբար գտնվել են Հասրաթյանի ուշադրության կենտրոնում, ծնունդ տալով հայ-բյուզանդական, հայ-վրացական, հայ-իրանական ճարտարապետական առնչություններին վերաբերող աշխատություններին:

Ճարտարապետ-գիտնականի հետազոտական գործունեության ընդգրկումն ուշմիջնադարյան ճարտարապետությունից հետզհետե ընդլայնվեց՝ ներառելով համընդհանուր հայ ճարտարապետությունը՝ տիպաբանական, տարածքային և ժամանակագրական գրեթե ողջ շրջանակով: Բազմաթիվ և բազմաբնույթ են աշխատությունները՝ մենագրություններ, գրքեր, ժողովածուներ, գրքույկներ, հոդվածներ, գիտաժողովների թեզիսներ, հանրագիտական հարյուրավոր բառահոդվածներ, 150-ից ավելի հուշարձանների չափագրություններ և այլն, որոնց զգալի մասը հրատարակված է արտերկրում՝ օտար լեզուներով: Աշխատություններից շատերը՝ «Սյունիքի 17–18-րդ դարերի ճարտարապետական համալիրները» (Երևան, 1973), «Очерк армянской архитектуры» (Москва, 1985), «Армянская архитектура раннего христианства» (Москва, 2000), *«Հայաստանի քրիստոնեական ճարտարապետության 1700 տարին» (Զ. Սարգսյանի հետ, Երևան, 2001) և այլն, հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության տարեգրության հիմնարար գործերից են:*

Գիտնականը մասնակցել է վերջին 3–4 տասնամյակներին Հայաստանում ու արտերկրում հայ մշակույթին վերաբերող գրեթե բոլոր գիտաժողովներին, պատշաճ ներկայացնելով հայ ճարտարապետության արդիական և հստակեցման կարոտ շատ հիմնահարցեր, ինչպես՝ հայկական ճարտարապետության հորինվածքային օրինաչափությունները, Հայաստանի և հարևան երկրների ճարտարապետական առնչությունները, վաղքրիստոնեական եկեղեցիները

---

[1] *Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Հայ ճարտարապետության պատմության պարբերացման հարցի շուրջ.– ՊԲՀ, 1971, № 3, էջ 92:*

ազգային ճարտարապետության համապատկերում, հայկական միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության արդի և հեռանկարային խնդիրները և այլն:

Մ. Հասրաթյանն իր հարուստ փորձն ու գիտելիքները ներդնում է նաև կրթության, հրատարակչական, հուշարձանների պահպանության և այլ բնագավառներում՝ հանդիսանալով գիտական, գիտամեթոդական, խմբագրական և մի շարք այլ խորհուրդների անդամ: Երկար տարիներ դասավանդում է Երևանի պետական համալսարանում, Գեղարվեստի պետական ակադեմիայում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում: Դասախոսություններով հանդես է եկել Փարիզի Սորբոնի համալսարանում (2000 թ.), Սիրիայի, Լիբանանի հայկական գաղթավայրերում՝ Հալեպում (1997 թ.), Բեյրութում (1999 թ.):

Ճարտարապետության դոկտոր է (1993 թ.), պրոֆեսոր (2003 թ.), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (2006 թ.), ՀՀ վաստակավոր ճարտարապետ (2007 թ.), ՀՀ պետական մրցանակի դափնեկիր (2009 թ.):

Ջերմագին շնորհավորում ենք բեղմնավոր գիտական ուղի անցած մեր բարեկամին, մաղթում քաջառողջություն, երիտասարդական ավյունի և անխոնջ գործունեության հարատևում:

ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ